ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՄԱՐԶԸ	ԼՈՌԻ
ՀԱՄԱՅՆՔԸ	ԱԼԱՎԵՐԴԻ
ԲՆԱԿԱՎԱՅՐԸ	ՔԱՐԿՈՓ

1.ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Բնակավայրը հիմնադրվել է 1930-ականներին՝ բնակավայրին կից գտնվող բազալտի և գրանիտի վերամշակմամբ զբաղվող գործարանի շուրջ: Իր լավագույն ժամանակներում գործարանում աշխատում էր 1000-ից ավելի մարդ, այդ թվում նաև հարևան Ճոճկան, Շնող և Արճիս գյուղերից: Սակայն Քարկոփի մասին հիշատակումները գալիս են նաև ավելի վաղ ժամանակներից: Այսպես, դեռևս մեծ բանաստեղծ Նաիրի Զարյանը իր «Ռուշանի Քարափը» ստեղծագործությունում հիացմունք է արտահայտում Քարկոփից մի քանի հարյուր մետր հեռավորության վրա գտնվող ժայռերով: Բանաստեղծությունը պատմում է քարափների ստորոտին բնակվող հովիվի՝ Ռուշան պապի մասին:

Քարկոփի՝ հինավուրց բնակավայր լինելու մասին է վկայում նաև Ռուշանի քարափների վերին հատվածում գտնվող հինավուրց պաշտպանական կառույցը: Բնակավայրի տարեցները պատմում եմ, որ այդ կառույցն օգտագործվել է «ղաչաղների» կողմից թշնամական հարձակումների ժամանակ պաշտպանվելու նպատակով:

Ի դեպ, սկզբնապես խորհրդային իշխանությունը նախատեսում էր խճի գործարանի համար հումք վերցնել հենց Ռուշանի քարափից: Մի որոշ ժամանակ այդպես էլ եղավ: Հումքը քարափի մոտից երկաթգծով տեղափոխում էին խճի գործարան ու այնտեղ վերամշակում ու տալիս վերջնական արտադրանք: Հենց այդ աշխատանքներից մեկի ժամանակ էլ էքսկավատորի ամբարձման ժամանակ հայտնաբերվեց հինավուրց մի խաչքար, որը, ցավոք սրտի, ամբարձիչի հարվածից վնասվեց՝ բաժանվելով երկու մասի: Տեղացիներն այն սեփական ուժերով վերականգնեցին ու տեղադրեցին գտնված վայրից ոչ հեռու՝ դարձնելով այն սրբատեղի:

2.ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Ալավերդի քաղաքից մոտ 18 կմ հյուսիս-արևելք՝ Դեբեդի ափերին: Ներկայումս գյուղը, որը խորհրդային տարիներին ուներ ավանի կարգավիճակ, հանրությանը հայտնի է ավելի շատ «Շեբզավոդ» (ռուս.՝ Щебзавод) անվամբ, որը գալիս է խորհրդային տարիներին Քարկոփին տրված ռուսերեն անունից: Անկախացումից հետո Շեբզավոդը թարգմանվեց բառացի ու դարձավ «Քարկոփ»:

3.ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Չոր մերձարևադարձային, շոգ և չոր ամառներով, տաք և մեղմ ձմեռներով:

4.ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Նախկին (ՀԽՍՀ) վարչական շրջանի անվանումը	Թումանյան

2. Բնակավայրի հեռավորությունը՝	
2.1) համայնքի կենտրոնից (կմ)	25
2.2) մայրաքաղաքից (կմ)	200
2.3) մարզկենտրոնից (կմ)	80
2.4) պետական սահմանից ուղիղ գծով (կմ)	15
2.5) նախկին շրջկենտրոնից (կմ)	-
2.6) միջպետական նշանակության ավտոճանապարհից (կմ)	0
2.6) մոտակա երկաթուղային կայարանից (կմ)	0
4. Բնակավայրի բարձրությունը ծովի մակերևույթից (մ)	600մ
5. Բնակավայրի վարչական տարածքը (քառ. կմ/հա)	7/700
6.Սահմանակից համայնքների և/կամ բնակավայրերի անվանումները	Շնող, Ճոճկան
7. Բնակավայրի վարչական ղեկավարի հեռախոսահամարը	077 818647
8. Բնակավայրում փոստային բաժանմունքի առկայությունը (այո, ոչ), քանակը	0
9.Հաստատված գլխավոր հատակագծի առկայությունը (այո, ոչ)	Ոչ
10. Քաղաքացիների սպասարկման գրասենյակի առկայությունը (այո, ոչ)	Ոչ

5.ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ

	2025թ.
1. Մշտական բնակչության թվաքանակը	363
2. Գրանցված ծնունդների քանակը	2
2.Մահացության դեպքերի քանակը	1
3.Ամուսնությունների քանակը	1
4. Ամուսնալուծությունների քանակը	0
5. Տնային տնտեսությունների թիվը	101
6. Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը	3
7. Կենսաթոշակառուների քանակը	60
8. Հաշմանդամություն ունեցող անձանց քանակը	13

6.ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԿՐԹԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	01.01.2025թ.
1. Գրադարանների քանակը	0
2. Արվեստի դպրոցների քանակը	0
3. Երաժշտական դպրոցների քանակը	0
4. Նախադպրոցական հիմնարկների քանակը	1
5. Հանրակրթական դպրոցների քանակը	1
6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների քանակը	0

7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը	0
8. Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը	0
9. Մարզադպրոցների քանակը	0

7.ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴ

	01.01.2025թ.
1. Բնակավայրի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը ($մ^2$)	4721 քառ.մ
2. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր թիվը	10
3. Բնակելի տների (առանձնատների) ընդհանուր թիվը	3

8.ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	01.01.2025թ.
1. Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա)	-
2. Բնակավայրերի հողեր (հա)	-
3. Արդյունաբերական, ընդերք օգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների	-
4. Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյետներ	-
5. Հատուկ նշանակության	-
6. Հատուկ պահպանվող տարածքների	-
7. Անտառային	-
8. Ջրային	-
9.Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը	-
10. Մանր եղջերավոր անասունների (ոչխար և այծ) գլխաքանակը	-
11. Խոզերի գլուխաքանակը	-
12. Գյուղատնտեսական տեխնիկա	-
12.1 տրակտորներ (քանակը)	-
12.2 կոմբայններ (քանակը)	-
13. Գյուղացիական տնտեսությունների թիվը	-

9.ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

1. Էլեկտրական ենթակայանների քանակը	1
2. Բնակավայրի գազիֆիկացման առկայությունը (այո, ոչ)	այո
3. Բնակավայրի աղբավայրի առկայությունը (այո, ոչ)	-
4. Բնակավայրում գերեզմանատան առկայությունը (այո, ոչ)	-
5. Ներբնակավայրային ճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	600
6. Կոմունալ և ճանապարհաշինական տեխնիկայի առկայությունը	-
6.1 Ինքնաթափ բեռնատար մեքենաների քանակը	-

6.2 Էքսկավատորների քանակը	-
6.3 Թրթուրավոր տրակտորների քանակը	-
6.4 Գրեյդերների քանակը	-
6.5 Աղբատար մեքենաների քանակը	-
6.7 Բազմաֆունկցիոնալ կոմունալ մեքենաների քանակը	-
6.8 Վակումային փոշեկուլ մեքենաների քանակը	-
6.9 Ավտոաշտարակների քանակը	-
7. Բնակավայրի տարածքով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	1 կմ
8. Բնակավայրի տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի առկայությունը (այո, ոչ) և դրանց քանակը	-
9. Ներհամայնքային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	այո
10. Ներբնակավայրային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	այո

10.ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

	01.01.2025թ.
1. Բնակավայրում համայնքապետարանի աշխատողների թվաքանակը, որից՝	2
1.1 համայնքային ծառայողներ	1
2. Բնակավայրի բնակիչ ավագանու անդամների թվաքանակը	-

11. ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնախնդիրը (նկարագրությունը)	Ակնկալվող լուծումը և լուծման ժամկետները
Համայնքի կենտրոնի, մարզկենտրոնի հետ կապի բացակայություն:	Հանրային տրանսպորտի ներդրում:
Քանդված և վնասված հենապատերի վերանորոգման ու նոր հենապատերի կառուցման անհրաժեշտություն:	Նոր հենապատերի կառուցում:
Ճանապարհների հիմնանորգման ահրաժեշտություն:	Ասֆալտապատում, ճանապարհների հիմնանորոգում: